Ն/39.1/8454
29.09.2023թ.

Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
Թաթուլ Հայրապետյան

**ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
Շրջակա միջավայրի նախարարության «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
Ֆրանսիայի Հանրապետություն, ք.Փարիզ 2023 թվականի սեպտեմբերի 19-22

**ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության Եվրոպայի և Հյուսիս Ատլանտյան տարածաշրջանային բյուրո

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) Եվրոպայի և Հյուսիս Ատլանտյան տարածաշրջանի բյուրոյի կողմից անցկացվող օդային տեղաշարժման պլանավորման օդերևութաբանական խմբի 33-րդ հանդիպման մասնակցություն

**ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

1. MET–Ի հետ կապված եզրակացություններ/ որոշումներ, METG, PCG EASPG հանդիպումների կողմից:
2. MET Panel-ի և հարակից աշխատանքային խմբերի հանդիպումների արդյունքները:
3. EASPG, MET-ի վերաբերյալ վերջին զարգացումները:
4. Օդերևութաբանական ծառայությունների իրականացման կարգավիճակը Եվրոպայի տարածաշրջանում:
5. Վերանայել WAFS-ի և SADIS-ի իրականացումը:
6. Վերանայել օդերևութաբանական ցուցումների և նախազգուշացումների

իրականացումը:

1) Հրաբխային մոխիր, արևադարձային ցիկլոն, ռադիոակտիվ նյութի և տիեզերական եղանակի հետ կապված խնդիրներ,
2) SIGMET, AIRMET և այլ նախազգուշացումների հետ կապված հարցեր:
7. OPMET տվյալների և OPMET կարգավիճակի պահանջների վերանայում փոխանակում, ներառյալ DMC և IWXXM զարգացումները:
8. Վերանայել որակի ստանդարտների իրականացումը և AMP–ի իրավասությունը, գնահատում:
9. MET ծառայությունների իրականացում Եվրոպայի տարածաշրջանի արևելյան մասում, ներառյալ PT/EAST-ից մուտքագրումը:
10. Եվրոպական օդային նավիգացիոն պլանի (ANP) MET դրույթների վերանայում:
11. MET աջակցություն օդային երթևեկության կառավարմանը (ATM)"
12. MET-ի թերությունները:
13. Թռիչքների անվտանգության և որակի կառավարման համակարգի կատարելագործումը:

## ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Եվրոպայի և Հյուսիս Ատլանտյան տարածաշրջանի գրասենյակի օդային տեղաշարժման պլանավորման օդերևութաբանական խմբի անդամները ներկայացրեցին արևելյան եվրոպայի պետությունների համար SIGMET-ի վերաբերյալ նոր ուղեցույցներ՝ OPMET-ի տվյալների փոխանակումը IWXXM-ի միջոցով EUR տարածաշրջանում:

Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության Եվրոպայի և Հյուսիս Ատլանտյան տարածաշրջանային գրասենյակի մասնագետների կողմից առաջարկած EUR DOC 014 և DOC 017 առաջնորդող փաստաթղթերում կատարված փոփոխությունները:

«Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ-ի կողմից ներկայացված «Միջազգային աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովման մասին» N 3 հավելվածի DOC9691 փաստաթղթում (ռադիոակտիվ և թունավոր քիմիական նյութերի, հրաբխային մոխրի ամպերի ուղեցույց) առաջարկներն ընդունվել են և ուժի մեջ են մտնելու 2024 թվականի հունվարի 31-ից:

Քննարկված հարցերից էր նաև «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ-ի կողմից կազմվող AIRMET և GAMET օդերևութաբանական հաղորդագրությունների մուտքը SADIS համակարգ:

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև օդերևութաբանական կենտրոնների վերասերտիֆիկացման, թռիչքների անվտանգության նոր հայեցակարգի ներդրման և որակի կառավարման համակարգերի զարգացման հետ կապված խնդիրներ:

«Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ-ի կողմից ներկայացվեց 2020-2022թթ. ժամանակաշրջանում իրականացված տեխնիկական միջոցների վերազինման աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, մասնավորապես.

Ն/39.1/8454
29.09.2023թ.

1. «Շիրակ» միջազգային օդանավակայանի օդերևութաբանական համակարգերի ամբողջական վերազինման մասին:
2. Թռիչքների անվտանգության և որակի կառավարման համակարգերի ընթացակարգերի կատարելագործման մասին,
3. Օդերևութաբան մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման վերաբերյալ:

«Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ
տնօրենի պաշտոնակատար

Թ.Հայրապետյան